

0177

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՕ-ՀՐՄ-ԱՇՁԲ-2019/8»**

ք. Երևան

« 15 » 08 2019թ.

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը», ի դեմս գործադիր տնօրեն **Աշոտ Կիրակոսյանի**, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Արտեզիա» ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Հ. Միրզախանյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **«ՀՀ Տավուշի մարզի Սարիգյուղ համայնքի համակարգի կառուցում» աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 **Պայմանագրով նախատեսված աշխատանքներն սկսվում են Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից և կատարման ժամկետը սահմանվում է՝ 120 օր :**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն **100** տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **30 աշխատանքային** օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուն հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **79,800,000 (յոթանասունինը միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 13,300,000 (տասներեք միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:** Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև **19,950,000 (տասնինը միլիոն ինը հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:**

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:⁴¹¹

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ -ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ

⁴¹¹ Կապալառուն կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելից պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հարկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:

կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՅԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման
հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլենցու 31
ՀՎՀՀ՝00846441

Հ/Հ՝ 900018006073
Կենտրոնական գանձարկարան

Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/


ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Արտեգիա» ՍՊԸ

Հասցեն՝ Արմավիրի մարզ գ. Արտիմետ
ՀՎՀՀ՝ 04413813

Հ/հ՝ 220213330305000
ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ ՓԲԸ

Էջմիածին մ/ճ
Տնօրեն
Հովիկ Միրզախանյան

/ստորագրություն/
Կ.Տ


Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

**«ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ԶՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ»
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

Ներկայացված է կից ֆայլով

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻԳՅՈՒՂ համայնքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման
հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31

ՀՎՀՀ՝ 00846441

Հ/Հ՝ 900018006073

Կենտրոնական գանձապահության

Գործադիր տնօրեն
Աշոտ Կորակոսյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Արտեզիա» ՍՊԸ

Հասցեն՝ Արմավիրի մարզ գ. Արտիմետ

ՀՎՀՀ՝ 04413813

Հ/հ՝ 220213330305000

ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ ՓԲԸ
Էջմիածին մ/ճ

Տնօրեն

Հովիկ Միրզախանյան

/ստորագրություն/

Կ.Տ

15 « 08 » Հավելված թիվ 1
 ՀՄ-ՀԲՄ-ԱՇՁԲ-2019/8 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ *
«ՀՀ Տավուշ մարզի Սարիգյուղ համայնքի խմելու ջրի համակարգի կառուցում»
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN	գնի հիմք	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Միավ. գինը հազար դրամ	Ընդամենը հազար դրամ
1	2	3	4	5	6	7
<u>Չողային աշխատանքներ</u>						
1	1-1139	տարածքի հարթեցում բուլդոզերով	100մ ²	0.70	6.366	4.46
2	1-1551	3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով հիմքերում բարձելով ինքնաթափին	1000 մ ³	0.016	601.363	9.62
3	1-961	նույնը ձեռքով	մ ³	1.00	2.348	2.35
4	Գ130-10	ավելորդ բնահողի տեղափոխում ինքնաթափով 10կմ	տն	21.000	2.534	53.21
5	1-968	2-րդ կարգի բնահողի հետլիցք ձեռքով	մ ³	3.00	0.976	2.93
<u>Չիմքեր</u>						
					0.000	
1	11-2	բնահողի տոփանում բազալտե խճով	100մ ²	0.18	34.965	6.29
2	8-27	ուղղաձիգ ջրամեկուսացում բիտումով 2 անգամ	100մ ²	0.58	83.298	48.31
3	6-21 1-21	ժապավենային հիմքերի կառուցում B-7.5 խամբարբետոնով	մ ³	13.00	42.691	554.98
<u>Միջնորդներ</u>						
					0.000	
1	8-140	Միջնորդների շարուն թեթև բետոնե սալերով n=10սմ	մ ³	1.62	33.121	53.66
2	8-59	միջնորդների ամրանավորում Փ8Ac-1 ձողերով	տն	0.0170	585.389	9.95
3	6-170 15- 11	Միաձույլ ե/բ բարավորների կառուցում B 15 մ.բ.	մ ³	0.013	89.525	1.16
4	շուկա	Ամրան Փ 6Ac-1	տն	0.0001	521.152	0.05
5	շուկա	Ամրան Փ 12 A-500C	տն	0.0023	510.433	1.17
6	7-291	բացվածքի պողպատե շվեյլերների մոնտաժում	տն	0.050	67.353	3.37
7	շուկա	շվեյլեր N 12	մ	4.800	6.411	30.77
<u>Պատերի կառուցում</u>						
1	8-163 16-7	Պատերի կառուցում ուղիղ կտրվածքի Արթիկ տուֆով/ԳՆՍՍ 4001-84/	մ ³	27.00	23.312	629.44
2	8-59	Պատերի հորիզոնական ամրանավորում Փ6Ac-1 ցանցով /ՅՑ-1/	տն	0.0581	585.389	34.01
3	15-131	ցոլովի երեսապատում բազալտե սալիկներով 30մմ հաստ.	մ ²	9.6	19.923	191.26
4	8-29	Արտաքին պատերի տակ հորիզոնական ջրամեկուսացում ց/ավազային շաղախով հեղուկ ապակու խառնուճով	100մ ²	0.16	234.802	37.57

5	6-168	Միաձույլ ե/բ գոտու կառուցում B15 /Գ-1,Գ-2/		մ ³	6.60	69.884	461.23
6	շուկա	Ամրան Փ 6Ac-1		տն	0.0854	521.152	44.51
7	շուկա	Ամրան Փ 12 A-500C		տն	0.1946	510.433	99.33
8	6-170 15-11	Միաձույլ ե/բ գոտի-բարավորի կառուցում 15 մ.բ.	B	մ ³	1.000	94.859	94.86
9	շուկա	Ամրան Փ 6Ac-1		տն	0.0142	5732.676	81.40
10	շուկա	Ամրան Փ 16 A-500C		տն	0.0767	508.872	39.03
11	6-80	Խարսխածողերի տեղադրում Փ10A 500C դասի ամրանով		տն	0.037	575.196	21.28
12	6-106 12-7	Միաձույլ ե/բ միջուկ-ների կառուցում B-15		մ ³	4.70	93.681	440.30
<u>Ծածկի կառուցում</u>							
1	9-94	ծածկի պողպատե շվեյլերների մոնտաժում		տն	0.654	74.940	49.01
2	շուկա	տաշտածն հեծան N16 /շվեյլեր/		մ	10.00	9.685	96.85
3	շուկա	տաշտածն հեծան N14/շվեյլեր/		մ	41.65	8.336	347.21
4	9-94	կավարամածի մոնտաժում պողպատե քառակուսի խողովակներից 50x50x2մմ		տն	0.252	4271.841	1076.50
5	շուկա	պողպատե քառակուսի խողովակի արժեքը 50x50x2մմ		մ	80.30	1.735	139.34
6	34-352	„Սենդվիչ“, տիպի տանիքի սալերի տեղադրում /գործարանային ներկած,պենետրիտետանից ջերմամեկուսիչով հաստ.150մմ / ԳՈՍՍ 32603-2012/		մ ²	38.00	22.228	844.65
7	շուկա	սալերի մոնտաժային հեղույսներ		հատ	24	0.300	7.19
8	շուկա	գործարանային արտադրության ներդիր էլեմենտների տեղադրում /гипсокартон/		մ	24	1.199	28.77
9	Շուկա	կախովի ջրհորդանների տեղադրում գունավոր ց/թիթեղով 0.5մմ		մ	8.0	2.414	19.31
10	Շուկա	կախովի ջրհորդանների միացման դետալներ /կրոնշտեյներ/		հատ	12	0.737	8.85
11	12-280	Ձնարգելիչների տեղադրում գունավոր ցինկապատ թիթեղից 0.5մմ		100մ ²	0.0180	99.537	1.79
12	Շուկա	Ձնարգելիչների արժեքը /1.5մ/		հատ	3	8.242	24.73
13	Շուկա	Ձնապաշտպանները ամրացնող պտուտակամեխ		հատ	30	0.075	2.25
14	6-83	Մինչև 4կգ մետաղական ներդիր էլեմենտներ տեղադրում		տն	0.0153	270.485	4.14
15	Շուկա	Պողպ.թերթ b=8մմ		տն	0.0113	708.916	8.01
16	Շուկա	Ամրան Փ14A500C		տն	0.0040	555.138	2.22
17	46-70	հեծանների հեմման հատվածների բետոնացում B-7.5		մ ³	1.3	109.227	142.00
18	8-279	ցինկապատ թիթեղից կաթիլաթափի մոնտաժում 0,55մմ հաստ.		մ ²	1.500	4.184	6.28
19	8-279	սալերի եզրագծով մոնտաժային կարանների,պատերի և դեֆլեկտորի հպման մասերի երեսապատում ցինկապատ թիթեղով 0,55մմ հաստ.		մ ²	7.000	4.184	29.29

20	15-622	Մետաղական էլեմենտների 2 շերտ յուղաներկում	մ ²	20.00	0.912	18.23
<i>Հատակներ</i>						
1	11-2	Բնահողի տոփանում խճով /20-40մմ/	100մ ²	0.35	35.444	12.41
2	11-11	Բետոնե նախաշերտի կառուցում 10սմ հաստությամբ B7.5	մ ³	3.500	42.785	149.75
3	11-55 11-56	Ցեմ, ավազային հարթ շերտի կառուցում 30մմ հաստ	100մ ²	0.390	145.841	56.88
4	5-105	Ցեմ, ավազային հարթ շերտի հղկում	մ ²	31.0	1.165	36.13
5	8-174	ջրամեկուսացում իզոգամով	մ ²	4.00	2.668	10.67
6	5-115	հատակ կերամիկական սալիկներից	մ ²	4.0	8.934	35.74
<i>Բազմաթիվներ</i>						
1	9-34	Մետաղական դռան շրջանակների տեղադրում /առանց արժեքի/	մ ²	4.050	7.632	30.91
2	շուկա	մետ. շվեյլեր N10	մ	8.4	5.751	48.31
3	շուկա	ուղղանկյուն կտր. մետաղական խողովակ 40x40x2	մ	15.6	1.386	21.62
4	շուկա	պողպատե անկյունակ L50x5	մ	2.9	2.530	7.34
5	շուկա	մետ. քիթեղ 2մմ	մ ²	7.8	9.835	76.71
6	շուկա	փրփրապլաստ 40մմ հաստ	մ ²	7.8	1.049	8.18
7	շուկա	մետաղական բռնակ	հատ	2	1.499	3.00
8	շուկա	Փական	հատ	1	4.496	4.50
9	շուկա	Ծխնի	հատ	6	0.749	4.50
10	6-83	Մինչև 4կգ մետաղական մերդիր էլեմենտներ տեղադրում /Լե 1/	տն	0.0122	270.485	3.30
11	Շուկա	Պողպ. քիթեղ b=10	տն	0.0068	717.498	4.88
12	Շուկա	Ամրան Փ12A500C	տն	0.0054	561.723	3.03
13	15-622	Մետաղական դռան շրջանակի յուղաներկում երկշերտ	մ ²	10.00	0.912	9.12
14	շուկա	Մետաղապլաստե 1 տակ 4մմ հաստ. ապակով դռան տեղադրում 4 խցիկանի 60մմ հաստ./հայկական պրոֆիլը/	մ ²	1.89	25.956	49.06
15	շուկա	Մետաղապլաստե վիտրաժի տեղադրում 60մմ հաստ 1 տակ 4մմ հաստ. ապակով	մ ²	5.01	13.699	68.63
16	շուկա	Մետաղապլաստե մերքին խուլ դռան տեղադրում 60մմ հաստ.	մ ²	1.47	31.725	46.64
17	շուկա	Մետաղապլաստե ապակեփաթեթով բացվող 4 խցիկանի պատուհանի տեղադրում 60մմ հաստ.	մ ²	1.80	23.073	41.53
18	շուկա	Մետաղապլաստե ապակեփաթեթով չբացվող 4 խցիկանի պատուհանի տեղադրում 60մմ հաստ.	մ ²	1.94	19.519	37.87
19	15-131	պատուհանագրգի տեղադրում տրավերտինե սալիկներով 30մմ հաստ.	մ ²	0.8	16.492	13.19
20	9-122	Մետ. պշտպանիչ ճաղաշարերի կառուցում	տն	0.054	86.536	4.67
21	շուկա	պողպատե անկյունակ L50x5	մ	7.8	2.530	19.73

22	շուկա	Ամրան Փ10A500c	տն	0.030	524.482	15.73
23	8-279	արտաքին լուսամուտագոգերի երեսապատում ց/թիթեղով 0,55մմ հաստ.	մ ²	0.500	4.184	2.09
24	15-622 164-7	Մետաղական ճաղաշարի յուղաներկում երկշերտ	մ ²	1.00	0.912	0.91
<u>հարդարում</u>					0.000	
1	11 -126	ճեղքին պատերի սվաղում բարդ շաղախով /ցեմենտա-կրային շաղախով/	մ ²	107.3	1.744	187.15
2	34-352	առաստաղի երեսապատում գիպսաստվարաթղթով խոնավակայուն 9,5մմ	մ ²	6.40	4.840	30.97
3	34-352	առաստաղի երեսապատում գունավոր պլաստմասե նյութով /ՊՎԲ/	մ ²	4.00	4.740	18.96
4	11 -136	ճեղքին շեփերի սվաղում բարդ շաղախով	մ ²	4.0	4.261	17.04
5	14-418	պատերի և շեփերի լավորակ ներկում ջրադիսպերսիոն ներկով	100մ ²	0.621	88.701	55.08
6	14-419	առաստաղի լավորակ ներկում ջրադիսպերսիոն ներկով	100մ ²	0.064	115.068	7.36
7	14-363	պատերի յուղաներկում	մ ²	38.2	1.321	50.47
8	15-82	պատերի երեսապատում կերամիկական սալիկներով	100մ ²	0.11	815.533	89.71
9	15-210	Արտաքին շեփերի սվաղում բարդ շաղախով 15սմ լայնությամբ	100 մ	0.18	67.523	12.15
10	11-98	Արտաքին պատերի լավորակ սվաղում բարդ շաղախով	մ ²	101.00	1.607	162.29
11	13-131	պարապետի գլխամասի երեսապատում բազալտե սալիկներով 30մմ հաստ.	մ ²	8.0	19.923	159.39
12	15-523	Արտաքին պատերի և շեփերի մակերեսների ներկում ճակատային ներկով ծեփամածկումով	100մ ²	1.030	104.705	107.85
<u>Հովար</u>					0.000	
1	46-188	Անցքերի գայլիկոնում քարե պատերում Փ15մմ, L-200մմ	100 հատ	0.08	112.666	9.01
2	6-77	Փշամեխերի տեղադրում Փ12մմ	տն	0.0015	942.510	1.41
3	9-50	Հովարի մետաղական կմախքի մոնտաժում անկյունակից	տն	0.046	178.593	8.22
4	շուկա	անկյունակի արժեքը L50*5	մ	12.0	2.530	30.35
5	8-14-B	կավարամածի կառուցում	մ ²	2.4	4.796	11.51
6	Շուկա	կավարամածի փայտանյութ 50x50մմ	մ ³	0.014	46.704	0.65
7	10-203	կավարամածի մշակում հրակայուն լուծույթով	100ս մշակ. մաս.	0.024	24.955	0.60
8	9-24	Հովարի ծածկույթի իրականացում ց/պրոֆիլավոր թիթեղից ԿՊ-21-0.55	100մ ²	0.020	541.233	10.82
9	4-79	Հովարի առաստաղի և ճակատների երեսապատում շերտ. պլաստմաստով /գունավոր/	մ ²	2.6	3.218	8.37
10	15-614	հովարի մետաղական անկյունակների յուղաներկում	100մ ²	0.024	127.584	3.06
<u>Սալվածք</u>					0.000	
1	8-11-1	Հիմքերի տակ բազալտե խճի նախաշերտի կառուցում 8սմ հաստ. /20-40մմ/	մ ³	1.40	9.106	12.75

2	6-1	բետոնե նախաշերտի կառուցում հիմքերի տակ B-12.5 /8սմ հաստ/	մ ³	1.40	43.495	60.89
3	11-55	Ցեմենտե հարթեցնող շերտի իրականացում 20մմ հաստ	100մ ²	0.18	103.856	18.69
4	6-128	բետոնե միաձույլ եզրաքարի կառուցում B-22,5 բետոնից	մ ³	0.50	82.731	41.37
<i>Մետաղական գանկապատ/96 գծմ/</i>					0.000	0.00
1	1-961	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ ³	2.1	2.348	4.93
2	1-968	ավելորդ բնահողի փռում տեղում ձեռքով	մ ³	1.90	0.976	1.86
3	1-968	բնահողի հետլիցք ձեռքով	մ ³	0.30	0.976	0.29
4	9-153	Մետաղական կանգնակների տեղադրում	տն	0.5460	48.713	26.60
5	Շուկա	պողպատե խողովակ Ф76x3	մ	68.25	3.092	211.00
6	Շուկա	Պողպ.թերթ b=5.10	կգ	112.40	0.606	68.07
7	Շուկա	պողպատե ձող Ф6,10 Ա-1	տն	0.0651	501.477	32.65
8	6-2	մետաղական սյուների տակ բետոնե հիմքերի կառուցում Կ-7.5	մ ³	1.9	58.078	110.35
9	9-122	Մետաղական դռնակի կառուցում	տն	0.0306	85.661	2.62
10	Շուկա	պողպատե անկյունակ L40x4	մ	10.85	1.540	16.71
11	Շուկա	պողպատե ձող Ф6 Ա-1	տն	0.0021	501.477	1.05
12	Շուկա	Պողպ.թիթեղ b=5	կգ	0.400	0.606	0.24
13	Շուկա	պողպատե ցանց 50x50	մ ²	1.70	1.027	1.75
14	9-122	ցանկապատի կառուցում փշալարից	տն	0.0932	1113.767	103.80
15	15-614	Մետաղական կոնստրուկցիաների յուղաներկում 2 անգամ	100մ ²	0.260	125.878	32.73
16	15-614	Մետաղական դռան յուղաներկում 2 անգամ	100մ ²	0.010	125.878	1.26
<i>Ներքին ջրամատակարարման գանգ</i>					0.000	
1	16-261 շուկա	պոլիպրոպիլենե ջրատար խողովակների տեղադրում Ф20մմ	գծմ	6.0	2.684	16.10
2	16-261 շուկա	պոլիպրոպիլենե ջրատար խողովակների տեղադրում Ф20մմ տաք ջրի համար	գծմ	4.0	3.183	12.73
3	22-366 շուկա	պոլիպրոպիլենե եռաբաշխիչ Ф20 x20 x 20	հատ	4	1.588	6.35
4	22-366 շուկա	պոլիպրոպիլենե արմունկ Ф 20	հատ	6	1.547	9.28
5	22-365	անցում պողպատից պոլիպրոպիլենի Ф20	հատ	4	1.451	5.80
6	16-134	Փական պոլիպրո-պիլենե Ф20 մմ	հատ	2	4.098	8.20
7	շուկա	ձկուն խողովակ Ф15 , L-300մմ	հատ	1	0.450	0.45
8	17-53	խառնիչ Ф15 ցնցուղով	հատ	1	10.478	10.48
9	17-53	խառնիչ Ф15 լվացարանի	հատ	1	6.732	6.73
10	շուկա	Ամրակցում Ф20	հատ	15	0.043	0.65
